

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՏԱՐՈՆ ԿԱՐԵՆԻ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հայկի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վահե Վարդանի Ստեփանյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու
Իռեն Վախթանգի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝

**Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի մայիսի 27-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թվականի ապրիլի 27-ին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ԽՄՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց սահմանադրական զարգացումների նոր շրջան: Հիմք ընդունելով նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով ամրագրված համաեվրոպական արժեքների կարևորությունն ու նշանակությունը, սկիզբ դրվեց ժողովրդի իշխանության իրականացման նոր ձևի՝ տեղական ինքնակառավարման ներդրմանը:

Եվրոպական ավանդական ժողովրդավարական երկրներում արդեն վաղուց ճանաչվել է տեղական ինքնակառավարման դերը իշխանության համակարգում: Տեղական ինքնակառավարման մարմինները՝ որպես բնակչությանն առավել մոտ կանգնած իշխանության մարմիններ, կրում են համայնքային նշանակություն ունեցող հանրային բնույթի հարցերի լուծման պարտականությունը:

Տեղական ինքնակառավարման ինստիտուտը մշտապես կարիք ունի փոփոխվելու և արդիականացվելու կապված հասարակական-քաղաքական գործընթացների հետ: Պետության և հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում տեղական ինքնակառավարմանը:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին կատարված սահմանադրական բարեփոխումներից հետո էլ ավելի անհրաժեշտ ու արդիական է տեղական ինքնակառավարման երաշխավորման, կազմակերպման ու գործունեության առավել կարևոր ու հիմնարար նշանակության հարաբերությունների սահմանադրական կարգավորումների՝ գործընթացի և հիմնախնդիրների համալիր գիտական ուսումնասիրությունը՝ այդ ինստիտուտի զարգացման հեռանկարները, համայնքի ավագանու և ղեկավարի իրավական կարգավիճակի հետզոտությունը, առկա խնդիրների վերհանումը և դրանց լուծման համար առաջարկությունների ներկայացումը:

Ելնելով վերոգրյալից՝ հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակի հիմնական տարրերի վերլուծությունը կարևոր ու գործնական նշանակություն ունի, ինչը հենց բնորոշում է ատենախոսության թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը և նշանակությունը:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Ատենախոսության մեջ քննարկվել են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնախնդիրներն առանձին համալիր գիտական քննարկման ու սահմանադրաիրավական

վերլուծության առարկա չեն եղել, ինչը փորձ է արվել կատարել սույն աշխատանքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտությունում նպատակ է դրվել իրավաբանական գիտության ընդհանուր տեսական դրույթների, հայրենական ու արտասահմանյան փորձի ամփոփման, ինչպես նաև գոյություն ունեցող պրակտիկայի հիման վրա վերհանել տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնախնդիրները, ինչպես նաև այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք հնարավորություն կստեղծեն բարձրացնել տեղական կառավարման արդյունավետությունը, հետագոտել տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, կազմակերպման ու գործունեության իրավական կանոնակարգման վիճակը և այլն:

Հետազոտության նպատակին հասնելու համար հիմնականում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տեղական ինքնակառավարման զարգացման պատմությունը և համակարգերը,

- հետազոտել տեղական ինքնակառավարման սահմանադրականացման պատմաիրավական նախադրյալները և փուլերը Հայաստանի Հանրապետությունում,

- վերլուծել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններն ու փոխգործակցության սկզբունքները,

- օրենսդրության վերլուծության հիման վրա ուսումնասիրել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հանրային իրավական հսկողություն հիմնախնդիրները,

- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների դերը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության բնագավառում,

- արտասահմանյան և հայրենական օրենսդրությունների և պրակտիկայի վերլուծության հիման վրա վեր հանել տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության ինստիտուտի հիմնախնդիրները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնախնդիրներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, գործունեության ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները:

Հետազոտության առարկան են կազմում ՀՀ օրենսդրությունը, արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, գիտական վերլուծությունները Հայաստանի Հանրապետությունում ու մի շարք այլ պետություններում սույն ոլորտում տիրող փաստացի վիճակը:

Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել, ինչպես հայազգի գիտնականներ Ա.Ասատրյանի, Գ.Դանիելյանի, Վ.Վ. Երեմյանի, Լ.Հակոբյանի, Ա.Հարությունյանի, Գ. Հարությունյանի և այլոց, այնպես էլ օտարազգի գիտնականների, մասնավորապես՝ Ա.Պ. Այդիսիների, Կ.Բ. Ամիրբեկովի, Ե.Գ.Անիմիցայի, Պ.Աշլիի, Ն.Ապիյանի, Գ.Վ.Ատամանյուկի, Ռ.Վ.Բաբունի, Մ.Վ.Բազլայի, Դ.Ն. Բախրախի, Վ.Ա. Բարանչիկովի, Վ.Վ. Բենկևիչի, Ն.Ս.Բոնդարի, Ա.Ն.Դեմենտևի, Ի.Վ.Դիդրիների, Ռ.Դրագոյի, Վ.Ս. Կաշոյի, Օ.Ա.Սոմովայի և այլոց աշխատությունները

Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների սահմանադրությունները, «Տեղական ինքնակառավարման մասին» և Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, միջազգային իրավական և այլ ակտերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես գիտական ուսումնասիրության տրամաբանական, վերլուծական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները, այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ պատմական-իրավական և համեմատական իրավական վերլուծության: Նշված մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտելու հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները, վեր հանելու տեղական ինքնակառավարման ոլորտում ներկայումս առկա խնդրահարույց հարցադրումները և առաջարկելու այդ հիմնահարցերի լուծման համար առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունը ներկայիս իրավաքաղաքական իրողությունների և սահմանադրական ժամանակակից կարգավորումների վերլուծության արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնախնդիրների և լուծման սահմանադրաիրավական ասպեկտների համալիր հետազոտություն է, որի համատեքստում փորձ է արվել ներկայացնել այդ մարմինների իրավական կարգավիճակի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Աշխատանքի շրջանակներում վերլուծվել են տեղական ինքնակառավարման զարգացման պատմությունը, միջազգային փորձը և համակարգերը, հետազոտվել են այդ ինստիտուտի սահմանադրականացման պատմաիրավական նախադրյալները և փուլերը Հայաստանի Հանրապետությունում, բացահայտվել են տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները՝ պայմանավորված տարբեր պատմական ժամանակահատվածներում դրա գործառնության ղերակատարմամբ,

հիմնավորվել են «տեղական նշանակության հարցեր» եզրույթի նորովի ընկալման ու կիրառության միտումները, ինչպես նաև ներկայացվել են վերջինիս անմիջական գործողության ու պաշտպանության հիմնական հնարավոր ուղղությունները: Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման հայրենական հայեցակարգը, բացահայտվել վերջինիս արմատական հիմնախնդիրները, դրանց պատճառները, ինչպես նաև ներկայացվել են կառուցակարգային առաջարկություններ:

Աշխատանքում բացահայտվել են նաև տեղական ինքնակառավարման պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման արդի միտումները: Արդյունքում՝ կատարվել են ոչ միայն տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են այդ մարմինների իրավական կարգավիճակի կատարելագործման մի շարք գործուն առաջարկություններ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Կարևորելով տեղական ինքնակառավարման հայեցակարգային հիմնախնդիրները հաղթահարելու և ուղղակի սահմանադրական երաշխավորության արդյունավետությունն ապահովելու հանրային նշանակությունը՝ ատենայնությունում առաջարկվում է հիմք ընդունել այն գաղափարը, որ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում պետությունն ունի իր առաջնային ազդեցության հետևյալ լծակները՝ ա) պետությունն օրենսդրորեն սահմանում է համայնքային նշանակության հանրային հարցերի շրջանակը, բ) տեղական հարցերի լուծման ժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական օժանդակության ցուցաբերում, գ) համայնքի տարածքում օրինականության պահպանմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության իրականացում, դ) տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների համար սոցիալական երաշխիքների ապահովում, ե) տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդաբանական օգնության տրամադրում և այլն:

2. Տեղական տեղական ինքնակառավարման երաշխավորման, կազմակերպման ու գործունեության առավել կարևոր ու հիմնարար նշանակության հարաբերությունների սահմանադրական կարգավորումների գործընթացն ինքնին համարժեք է տեղական ինքնակառավարման նույն սահմանադրականացմանը, որն ընկալվում է որպես իրավաբանական գործընթաց ու սահմանադրական կարգավորման հետևանք: Ընդ որում, էթե սահմանադրականացումն ուղղված է տեղական ինքնակառավարման

սահմանադրական երաշխավորմանը, ապա այդ հանգամանքն անուղղակիորեն սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ է հաղորդում տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում «տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հսկողություն» եզրույթի համալիր հետազոտությունը, թույլ է տալիս հանգելու այն եզրահանգման, որ այդ հսկողությունը որպես սահմանադրական ինստիտուտ, ուղղված է տեղական ինքնակառավարման մարմինների անկախության ապահովմանն ու գործունեության օրինականության պահպանմանն, ինչպես նաև տեղական ինքնակառավարման երաշխավորմանը և դրա իրագործման շրջանակների և քաղաքական իշխանությանն այդ մարմինների ենթակայության սահմանների սահմանմանը: Միաժամանակ, հիմնավորվել է, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հսկողությունն ունի սոցիալական բնույթ, քանի որ համայնքի բնակիչների շահերից էլնելով «պետություն-համայնք» և «համայնք-բնակիչ» համակարգերի ներդաշնակ հարաբերակցությունից բխում է տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունը և նրանց գործունեության արդյունավետությամբ:

4. Կարևորելով պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների անհրաժեշտությունն ու նշանակությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է այն գաղափարը, որ այդ փոխհարաբերություններն իրագործվում են երկու հիմնական ձևերի՝ տեղական ինքնակառավարման համակարգման ու պետական հսկողության իրականացման միջոցով, ընդ որում, եթե տեղական ինքնակառավարման համակարգումն ենթադրում է այդ հարաբերությունների երկու մասնակիցների միջև փոխադարձ ու վստահելի փոխհարաբերությունների մշակույթի ձևավորում ու հաստատում, ապա պետական հսկողությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավասու մարմինների միակողմանի գործողությունների կատարմամբ:

5. Ատենախոսությունում առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու և քաղաքացու իրավունքներն ընկալել որպես տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք ու պոզիտիվ պարտականություն, որի բովանդակությունը պայմանավորված է համայնքներում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավաչափ իրացման համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կազմակերպական բնույթի ընդհանուր երաշխիքների ստեղծմամբ ու զարգացմամբ:

6. Ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական նոր կարգավորումների շրջանակում համայնքի բնակիչների շահերից ելնելով համայնքային նշանակության ցանկացած հանրային հարցի լուծումն իրավաչափ է, քանի դեռ այդպիսի հարցերի լուծումը որևէ կերպ վերապահված չէ պետական մարմիններին, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական պատասխանատվությամբ համայնքային խնդիրները լուծելու սահմանադրական պահանջի իրացման պարագայում նախընտրելի է լուծել այն հարցերը, որոնք օժտված են համայնքային նշանակությամբ և ունեն հանրային բնույթ:

7. Տեղական ինքնակառավարման համակարգում մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, հարգման ու պաշտպանության համար անհրաժեշտ է հիմք ընդունել «տեղական իրավակարգ»-ի վերաբերյալ գաղափարը, որն ընկալվում է որպես համայնքի տարածքում օրինականության ապահովման արդյունք, բովանդակում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների անվերապահորեն պահպանումը և դրանց խախտմանն ուղղված ցանկացած գործողության կանխարգելումը: Հետազոտության շրջանակներում վեր է հանվել «տեղական իրավակարգ» եզրույթի էությունը և տեղական ինքնակառավարման երաշխավորման համատեքստում ներկայացվել տեղական իրավակարգի որպես համայնքի տարածքում օրինականության պահպանմանը նպաստող գործոնների էությունն ու նպատակային նշանակությունը:

8. Բացահայտելով հանրային-իրավական պատասխանատվությանը որպես տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական կարգավիճակի առանձնահատուկ տարրի բովանդակության հիմնահարցերը, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ այն առավելապես արտահայտվում է ոչ միայն պոզիտիվ ուղղվածությամբ՝ լիազորությունների պատշաճ իրականացմամբ ու պարտականությունների բարեխիղճ կատարմամբ, այլև հանրային իշխանություն կրողի՝ համայնքի բնակչության առջև պատասխանատվության դրսևորմամբ:

9. Կարևորելով տեղական ինքնակառավարման մարմինների հանրային-իրավական պատասխանատվության հասկացության հանրային նշանակությունը՝ ատենախոսությունում առաջարկվում է տվյալ պատասխանատվության ձևը որոշակի տարբերել իրավաբանական պատասխանատվությունից հետևյալ չափանիշներով. ա) որ հանրային-իրավական պատասխանատվության մեջ համակցում են պատասխանատվության և իրավական, և քաղաքական տարրեր, բ) հանրային-իրավական պատասխանատվության սուբյեկտները կրում են

պատասխանատվություն հանրային իշխանության կրողի (ժողովուրդ, համայնք, բնակիչ) առջև:

Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը կարևորվում է նրանով, որ դրանում կատարված վերլուծությունների արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել «Մահմանադրական իրավունք», «Մունիցիպալ իրավունք» դասընթացներում ու հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է տեղական ինքնակառավարմանը:

Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց կապակցությամբ բերված հիմնավորումները կարող են նպաստել իրավաստեղծ գործունեության իրականացմանը՝ ՀՀ Մահմանադրության և տեղական ինքնակառավարման օրենսդրության բարեփոխումների ընթացքում, ինչպես նաև օրենսդրական մեկնաբանությունների, կրթական, մեթոդական ու գիտագործնական նյութերի և գրականության մշակման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, որտեղ ներկայացվել են զեկույցներ, գիտական հոդվածներ, հետազոտություններ, կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ ու խորհրդակցություններ: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված մենագրությունում և գիտական մի շարք հոդվածներում, տարբեր խորհրդածոլովների, գիտաժողովների սեմինարների և տարատեսակ այլ ձևաչափերով կազմակերպված քննարկումների ընթացքում ներկայացված ելույթներում, զեկույցումներում ու այլ աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված յոթ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական, նորմատիվ ու մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության գիտատեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Տեղական ինքնակառավարման տեսական-իրավական հիմնահարցերը սահմանադրական իրավունքի տեսության ու պրակտիկայի համատեքստում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման իրավաբնական հիմնախնդիրները. պատմատեսական վերլուծություն»** վերտառությամբ, Հեղինակը, համապատասխան վերլուծության է ենթարկում տեղական ինքնակառավարման իրավաբնական հիմնախնդիրները, կատարում է պատմատեսական վերլուծություն ու ներկայացնում է տարբեր հետազոտողների կողմից ներկայացված տեսակետներն ու վերջիններիս կողմից շարադրված ձևակերպումները տեղական ինքնակառավարման վերաբերյալ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերի վերլուծությունը սահմանադրական իրավունքի տեսության տեսանկյունից»** վերտառությամբ, անդրադարձ կատարելով տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերի վերլուծությանը, Հեղինակի կողմից նախևառաջ հակիրճ ներկայացվում է միջազգայնորեն ընդունված տեղական ինքնակառավարման հիմնական մոդելները, ներկայացվում է դրանց էությունը պետությունների օրինակների վրա, ինչպես նաև դուրս են բերվում առկա համակարգերի միջև համընդհանուր միտումները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Հայաստանի Հանրապետության պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները և փոխգործակցության սկզբունքները»** վերտառությամբ, Հեղինակը, ներկայացնում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, դրանց իրագործման ձևերը, ինչպես նաև առանձնացնում է փոխգործակցության որոշակի սկզբունքներ: Միաժամանակ տվյալ ենթագլխում Հեղինակի կողմից դուրս են բերվում պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում պետության առաջնային ազդեցության լծակները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ինքնատիպ ազդեցության ձևերը պետության նկատմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և դրանց իրականացման նկատմամբ հսկողության սահմանադրաիրավական հիմունքները»** վերտառությամբ, Հեղինակի կողմից, նախևառաջ, բացահայտվում են տեղական ինքնակառավարման մարմինների

լիազորությունների ընդհանուր բովանդակությունը, ինչպես նաև ներկայացվում են դրանց իրականացման նկատմամբ հսկողության սահմանադրաիրավական հիմունքները, տեսակները:

Երրորդ ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման մարմինների հանրային-իրավական ու մունիցիպալ-իրավական պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրները»** վերտառությամբ, Հեղինակը, ուսումնասիրելով «հանրային իրավական պատասխանատվություն» և «մունիցիպալ իրավական պատասխանատվություն» հասկացությունները, վերջիններիս տարատեսակ բնորոշումները, առանձնակի հետազոտության ու քննարկման առարկա է դարձնում դրանց հարաբերակցության հիմնախնդիրները՝ բացահայտելով ու վերհանելով սահմանադրական պատասխանատվության գործող կառուցակարգերը, դրանց դրսևորման առանձնահատկությունները, դրանցում առկա առավելություններն ու թերությունները, ներկայացնում սույն ոլորտում ձևավորված լավագույն լուծումների փորձը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում. նախադրյալները և փուլերը»** վերտառությամբ, վերլուծության են ենթարկված Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման սահմանադրականացման գործընթացները, ներկայացվում են տեղական ինքնակառավարման սահմանադրականացման նախադրյալները, ինչպես նաև կատարվում է տեղական ինքնակառավարման սահմանադրականացման փուլերի վերլուծություն:

Երկրորդ ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարումը և մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների արդիականացման պայմաններում»** վերտառությամբ, Հեղինակն, ընդգծելով, որ տեղական ինքնակառավարման համակարգում առանցքային նշանակություն ունի նաև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության առանձնահատկությունների բացահայտման խնդիրն, իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումներով ամրագրված նորմերի համակարգային վերլուծություն, որի հիման վրա ներկայացնում է տեղական

ինքնակառավարման մարմինների դերը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության ոլորտում:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու Հեղինակի եզրահանգումները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Տեղական ինքնակառավարման որպես ժողովրդաիշխանության իրականացման ձևի և հանրային իշխանության տեսակի վերաբերյալ արտահայտված տեսակետների և դրանց գիտագործնական վերլուծության արդյունքների հիման վրա կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ սահմանադրական իրավունքի տեսության տեսանկյունից տեղական ինքնակառավարումը պետք է ընկալել որպես որևէ բնակավայրի տարածքում հանրային կառավարման կազմակերպման այնպիսի միջոց, երբ համայնքային նշանակության հարցերը լուծվում են համայնքի սեփական միջոցներին ու հնարավորություններին համապատասխան ու բնակիչների անմիջական մասնակցությամբ՝ վերջիններիս կողմից ձևավորված մարմինների միջոցով:

2. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության սահմանումը, նրանց պետական լիազորություններ պատվիրակելը, սեփական ու պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելը, ֆինանսական միջոցներ տրամադրելը և այլն, ցույց են տալիս, որ այդ մարմինների ինքնուրույնությունը բացարձակ չէ:

3. Տեղական ինքնակառավարման համակարգերի վերլուծության արդյունքների հիման վրա կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ բոլոր համակարգերին բնորոշ է հետևյալ համընդհանուր միտումները՝

ա) տեղական ինքնակառավարման ու պետական կառավարման հարաբերակցությունը խարսխվում է կառավարման համակարգի ապակենտրոնացման սկզբունքի վրա, որի իրացումը գուցարդվում է ոչ միայն պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պարբերական փոխանցմամբ, այլև վերջիններիս լիազորությունների սահմանների ընդլայնմամբ,

բ) տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման, գործունեության առանձնահատկությունները, լիազորությունները և պետական կառավարման մարմինների հետ փոխհարաբերությունները սահմանվում են բացառապես սահմանադրությամբ և օրենքներով,

գ) տեղական ինքնակառավարման մարմինները դիտարկվում են որպես իրական ներկայացուցչական մարմիններ տեղերում,

դ) տեղական ինքնակառավարումը պետություններում երաշխավորվում է նրա մարմինների անկախությամբ ու ինքնուրույնությամբ:

4. Պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմնախնդիրների վերլուծության արդյունքներով կարևորվել են այդ մարմինների փոխգործակցության հիմքում ընկած հետևյալ սկզբունքները՝ ա) պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների և գործունեության կազմակերպական ինքնուրույնության երաշխավորումը, բ) Սահմանադրությամբ և օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման գույքային ու ֆինանսական առանձնացվածությունը, գ) տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված իրավասության ու ֆինանսական ռեսուրսների համաչափության ապահովումը, դ) պետական իշխանության մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների առանձին պետական լիազորություններով օժտելու և այդ լիազորությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, ե) վարչատարածքային միավորների կայունության երաշխավորումը, զ) տեղական ինքնակառավարման դատական պաշտպանության սահմանադրական երաշխավորումը:

5. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում տեղական ինքնակառավարումն ունի պետության նկատմամբ իր ազդեցության ինքնատիպ ձևերը, ինչպիսիք են, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պարտադիր լինելը համայնքի տարածքի բոլոր անձանց ու կազմակերպությունների համար անկախ դրանց կարգավիճակից ու կազմակերպչի րավական ձևից, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ մասնակցությամբ որոշակի հարցերի լուծման համար, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունն ընտրությունների և հանրաքվեների կազմակերպմանը, պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների պատվիրակում և այլն:

6. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրների հետազոտության արդյունքներով կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ այդ մարմինների գործունեության օրինականությունը դիտարկվում է որպես հսկողության նպատակ և օբյեկտ, այնուամենայնիվ, դրանով տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմք, իր իրական կառուցակարգերի համակարգով ու արդիականացված կառուցվածքով համապատասխանեցվեց եվրոպական իրավական չափորոշիչներին:

7. Ատենախոսության հիմնավորվել է այն եզրահանգումը, որ «տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հսկողություն» եզրույթի տեսական բնութագրիչները կանխորոշում են նշված եզրույթի իրավական կարգավորման առանձնահատկությունները, ընդ որում, նույնաբնույթ հարաբերություններ կարգավորող իրավական ակտերում այդ եզրույթի տարբեր իմաստով կիրառումն ու մեկնաբանությունը ոչ միայն չեն նպաստում օրենսդրության ներդաշնակեցմանը, այլև իրավական որոշակիության տեսանկյունից դժվարություններ կարող են առաջացնել իրավակիրառ գործունեության ընթացքում՝ առավել խոցելի դարձնելով կարգավորվող ոլորտը: Ուստի, առաջարկվում է տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ ամրագրել «տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հսկողություն» եզրույթի համապարփակ բնորոշումը, որը կիրառելի կլինի նաև այլ իրավական ակտերով կարգավորվող իրավական հարաբերությունների կարգավորման ընթացքում:

8. Մունիցիպալ-իրավական պատասխանատվության ու տեղական ինքնակառավարման մարմինների հանրային-իրավական պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրների վերլուծության արդյունքներով կատարվել են հետևյալ եզրահանգումները.

ա) հանրային-իրավական պատասխանատվությունն ավելի լայն հասկացություն է քանի որ իր օբյեկտով և օբյեկտիվ կողմով այն ընդգրկում է ոչ միայն սահմանադրական ու մունիցիպալ իրավունքի, այլև՝ վարչական, ֆինանսական և իրավունքի այլ ճյուղերի նորմերով կարգավորող հարաբերություններ՝ կապված համայնքային նշանակության հանրային հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության կարգավորման հետ: Միաժամանակ, այն՝ առավելապես արտահայտվում է ոչ միայն դրա պոզիտիվ ուղղվածությամբ՝ լիազորությունների պատշաճ իրականացմամբ և պարտականությունների բարեխիղճ կատարմամբ, այլև՝ հանրային իշխանություն կրողի՝ համայնքի բնակչության առջև պատասխանատվության դրսևորմամբ,

բ) մունիցիպալ-իրավական պատասխանատվությունն ինքնուրույն իրավական ինստիտուտ է և իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ, որն իրենից ներկայացնում է իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները և նպատակ ունի ապահովել Մահմանադրությամբ ամրագրված նորմերի կատարումը, սահմանադրական կարգի և օրինականության պահպանումը: Միաժամանակ, այդ պատասխանատվության գոյության հիմքում ընկած են հետևյալ ելակետային

մոտեցումները. դրա նորմատիվ հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, այդ պատասխանատվության սուբյեկտ են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարը և ավագանին, ինչպես նաև համայնքի բնակիչը, իսկ այդ պատասխանատվության փաստական հիմք են հանդիսանում սահմանադրական և մունիցիպալ իրավախախտումները,

գ) այն մասով, որ տեղական ինքնակառավարման մարմինները պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվություն են կրում իրենց սեփական և պատվիրակված լիազորությունների իրականացման և օրենսդրությանը չհակասող ակտերի ընդունման համար, այդ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների հանրային-իրավական պատասխանատվությունը նույնականացվում է մունիցիպալ-իրավական պատասխանատվության հետ:

9. Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմքում ընկած է ոչ միայն սահմանադրական նորմերով տեղական ինքնակառավարմանն առնչվող հարաբերությունների ամրագրման նպատակահարմարությունը, այլև այդ գործընթացի թույլատրելիության սահմանները, ընդ որում, եթե սահմանադիրն իրավական նպատակահարմարության տեսանկյունից է որոշում տեղական ինքնակառավարմանն առնչվող հիմնարար նշանակության հարաբերությունների սահմանադրականացման անհրաժեշտությունը, ապա նրա պոզիտիվ իրավունքն է ճանաչել տեղական ինքնակառավարման սահմանադրականացման այն սահմանները, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման երաշխավորման և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման ներդաշնակ հարաբերակցության ապահովման համար:

10. Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կազմում են ոչ միայն պետական իշխանության մարմինների գործունեության օբյեկտ, այլև արտացոլում են տեղական ինքնակառավարման և դրա մարմինների դերը այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքների ապահովման գործում, ինչպես նաև այդ մարմինների պարտականությունը համայնքի բնակիչների շահերի պաշտպանությանն ուղղված գործողությունների իրականացման առումով:

11. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների կարևորագույն պարտականություններից ու գործառույթներից է, որի բովանդակությունը պայմանավորված է համայնքներում մարդու և

քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրավաչափ իրացման համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական ու սոցիալական կազմակերպական բնույթի ընդհանուր երաշխիքների ստեղծմամբ ու զարգացմամբ:

12. Տեղական ինքնակառավարման համակարգում մարդու և քաղաքացու անձնական (քաղաքացիական), քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքների դասակարգումն ինքնին նշանակում է դրանց ապահովման, հարգման ու պաշտպանության առանձնահատկությունների սահմանում:

13. Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների համատեքստում համայնքի բնակիչների շահերից ելնելով համայնքային նշանակության ցանկացած հանրային հարցի լուծումն իրավաչափ է, քանի դեռ այդպիսի հարցերի լուծում որևէ կերպ վերապահված չէ պետական մարմիններին: Բացի այդ, եթե հաշվի առնենք տեղական ինքնակառավարման մարմինների սեփական պատասխանատվությամբ համայնքային խնդիրները լուծելու սահմանադրական պահանջը, ապա միանշանակ նախընտրելի է խոսել տեղական նշանակության հարցերի միայն այն մասի լուծման մասին, որոնք օժտված են համայնքային նշանակությամբ և ունեն հանրային բնույթ:

14. Ներկայումս նկատվում են մունիցիպալ իրավական պատասխանատվության շրջանակում միայն տեղական ինքնակառավարման մարմինների նեգատիվ պատասխանատվության սահմանման ու համայնքի բնակիչների պատասխանատվության բացառման վերաբերյալ միտումները: Նման միտումները վերացնելու համար անհրաժեշտ է ելնել այն գաղափարից, որ բոլոր դեպքերում համայնքի բնակիչները մունիցիպալ իրավական պոզիտիվ պատասխանատվության սուբյեկտ են և նրանք պատասխանատու են իրենք իրենց առջև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընտրության, վերջիններիս հետագա գործունեության համար, ինչպես նաև տեղական հանրաքվեներում կատարված քվեարկությունների համար:

15. ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի տրամաբանությանը համապատասխան՝ «համայնքային նշանակության հանրային հարցեր» եզրույթը բովանդակային առումով համահունչ է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության տնօրինման առարկային, այսինքն, ինչին ուղղված է այդ մարմինների իրավունքն ու կարողությունների իրացումը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում. Մենագրություն, Երևան: 2016, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 9 տ.պ.:

2. «Տեղական ինքնակառավարման իրավական համակարգերը, համեմատական-իրավական վերլուծություն», «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 2014, էջեր 62-70:

3. «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համատեքստում», «Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2014, գիրք 5(1), էջեր 137-140:

4. «Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները», «Գիտական հոդվածների ժողովածու» գիտական հանդես, Երևան, 2015, էջեր 95-100:

5. «Տեղական ինքնակառավարումը և մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում», «Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2015, գիրք 6, էջեր 329-340:

6. «Տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվությունը», «Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2015, գիրք 6, էջեր 341-352:

МАРГАРЯН ТАРОН КАРЕНОВИЧ

**ОСНОВОПОЛАГАЮЩИЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ
МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ
АКТУАЛИЗАЦИИ ПРАВОВОЙ СИСТЕМЫ**

РЕЗЮМЕ

После распада СССР независимые государства, в том числе и Армения, прошли период конституционного развития. В данном периоде, взявши за основу закреплённую Европейской хартией местного самоуправления общеевропейские ценности, был основан новый вид правления народа-системы местного самоуправления.

Институт местного самоуправления всегда нуждаются в переменах и актуализации, в связи с общественно-политическим процессом. После конституционных преобразований 2015 года необходимым и актуальным становится общее научное исследование правового состояния органов местного самоуправления, в том числе перспективы развития данного института, старейшин округа, решение задач правовых состояний руководителей округов, нахождение задач и представление предложений для закрепления в законодательстве.

В диссертации исследованы многочисленные вопросы, которые в той или иной мере были отображены в работах различных ученых. В диссертационной работе была поставлена цель обобщения общих теоретических положений юридической науки, отечественного и зарубежного опыта, а также на основании существующей практики местного самоуправления вывести задачи, решения этих задач, которые дадут возможность поднять уровень местного самоуправления, исследовать образование, организацию и деятельность состояний правовых правил органов местного самоуправления.

Для достижения цели исследования, были поставлены следующие задачи: - изучить историю развития местного самоуправления, их состояние и систему, - исследовать историко-правовую основу и стадии конституциализации местного самоуправления в РА,

- анализировать соотношение государственного правления и органов местного самоуправления,

- на основании анализа законодательства исследовать государственный правовой надзор над органами местного самоуправления,

-изучить полномочия органов местного самоуправления в РА в области защиты прав и свобод человека и гражданина, - поднять задачи института ответственности органов местного самоуправления,

- анализировать состояние органов местного самоуправления в рамках упорядочения Конституции (с переменаи 2015года) в РА.

Объектом исследования диссертации являются основные вопросы конституциализации местного самоуправления в РА: образование органов местного самоуправления, возникающие при деятельности общественные взаимоотношения.

Предметом исследования является законодательство РА, законодательства других зарубежных стран, международные правовые акты, научный анализ фактического состояния данной структуры в РА и в ряде других стран. В работе автор выполнил историко-правовой анализ, выполнено изучение основных структур местного самоуправления, представлены взаимоотношения государственной власти и местного самоуправления, представлено содержание полномочий органов местного самоуправления и осуществлены конституционно-правовые основы их надзора, анализированы основные задачи общественно-правовой и муниципально-правовой ответственности органов местного самоуправления. Выполнены тщательные исследования конституциализации органов местного самоуправления, а также изучены в системе местного самоуправления предпосылки, имеющее специальное значение права, обеспечение свободы и особенности обороны человека и гражданина.

Совместно с выполнением вышеперечисленной работы были сделаны выводы и предложения по решению поставленных задач.

MARGARYAN TARON

ISSUES OF CONSTITUTIONALIZATION OF THE LOCAL SELF-GOVERNMENT IN THE TERMS OF MODERNIZATION OF THE LEGAL SYSTEM

SUMMARY

After the collapse of the USSR, the states which achieved independence, amongst them Armenia, entered into the phase of constitutional developments. At that period of time, the pan-European values stipulated in the European Charter of the Local Self-Government, introduction of the local self-government as the new form of the implementation of power of people was taken as grounds.

By constitutionalization, the institution of the local self-government stays in the permanent need of alteration and modernization due to the social-political processes. In 2015, after the constitutional amendments, the precise scientific study of the legal status of the bodies of the local self-government amongst them the perspectives of development of that institution, study of the issues of the legal status of the community council and its head, identification of the problems and presentation of the suggestions to stipulate them legislatively, become urgent.

Numerous issues, which are somewhat implemented in the works of numerous researchers, are discussed in the thesis.

On the grounds of the summarization of the national and foreign practice, as well as on the grounds of the current practice the thesis follows the aim to reveal the issues of the constitutionality of the practice of local self-government as well as submission of such solutions which will aid to increase the effectiveness of the local self-government and study the status of the legal regulation of formation, organization and activity of the bodies of local self-government, etc.

For achieving the aim of the study, the following issues are pointed out:

- Study of the history of development of the national local self-government, their status and systems,
- Study of historical-legal prerequisites and phases of constitutionalization of local self-government in the Republic of Armenia,

- Analysis of the correlations of bodies state governance and local self-government,

- Study of the activity of the public legal control over the bodies of local self-government on the basis of the analysis of legislation,

- Study of competence of the bodies of local self-government in the Republic of Armenia in the domain of ensuring and protection of the human rights and freedoms,

- Revealing the issues of the institution of liability of the bodies of local self-government in comparison with the foreign and national practice,

- Analysis of the status of the bodies of local self-government in the framework of regulation of the Constitution of the Republic of Armenia (with the amendments of 2015),

- The issue of constitutionalization of the local self-government in the Republic of Armenia, i.e. social relations which originate during the formation and activity of the bodies of local self-government, is the main object of the study of the thesis.

The RA legislation, legislations of a number of foreign countries, international legal acts, scientific analysis, actual situation in the Republic of Armenia and a number of states are the subjects of the study.

The author presented a detailed analysis, studies of the main systems of local self-government are made, correlations of the state power and local self-government are pointed out, the contents of powers of the bodies of local self-government and constitutional legal principles of control over their implementation is presented, the issues of liability of public - legal and municipal - legal bodies of local self-government are analyzed. Detailed study of the prerequisites of constitutionalization of the bodies of local self-government is undertaken, as well as, the peculiarities of guaranteeing and protection human rights and freedoms are studied.

Simultaneously with the abovementioned study, certain conclusions are achieved and suggestions of solution of the revealed problems are made.